ԿԱՐԾԻՔ

Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Արթուր Սրապի Նազարեթյանի ԺԲ.00.04-Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է քաղաքացիական դատավարության իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկին՝ վճռաբեկ վարույթին: ՈՒսումնասիրության առարկա է դարձել վերջինիս հետ կապված արդի հիմնահարցերը, որոնք հատկապես կարևորվում են ժամանակակից քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումների շրջանակում:

Ատենախոսական աշխատանքում հեղինակն իրավացիորեն փաստում է, որ անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով, չի սահմանափակվում միայն ընդհանուր իրավասության դատարան դիմելու և գործն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտ ստանալու հնարավորությամբ: Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը ենթադրում է նաև կայացված դատական ակտերի բողոքարկում, որի արդյունքում ուղղվում են ստորադաս ատյանի թույլ տված սխալները:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտը իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական

սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը[1]:

ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներից բխող՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը ևս գտել է, որ «որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»:

Անդրադառնալով վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման խնդիրներին՝ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1192 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով» [2] : Այսինքն՝ անհերքելի է, որ Վճռաբեկ դատարանում նույնպես ամբողջությամբ պետք է գործեն դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքի սկզբունքները՝ այն առանձնահատկություններով, որոնք բնորոշ են այս ատյանում գործի քննությանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մինչև այս ատյանը գործն արդեն իսկ քննված է լինում ստորադաս երկու ատյաններում: Կասկածից վեր է, որ վճռաբեկ ատյանում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը մեծապես կախված է այս ատյանի դատարան դիմելու մատչելիությամբ: ՀՀ սահմանադրական դատարանն իր 22.12.2015թ. ՍԴՈ-1249 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևոր են ոչ միայն

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015թ. վարչական գործ թիվ ՎԴ 3/0347/05/13 որոշումը:
[2] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2017թ. ՍԴՈ-1363 որոշումը:

դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից»:

Արդարադատության մատչելիություն նշանակում է ոչ միայն դատարանում գործի հարուցման նախաձեռնման հնարավորություն, այլ նաև բողոքարկման և դատավարական թույլատրելի բոլոր միջոցներով գործի վերանայման օրենսդրությամբ սահմանված հնարավորություն: Վճռաբեկության փուլում արդարադատության մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է սահմանել օրենսդրական ընթացակարգերի այնպիսի իրավակարգավորումներ, որոնք հուսալի իրավական երաշխիքներ կստեղծեն այս վարույթում անձի դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրագործման համար:

Հարկ է նշել, որ վճռաբեկության կարգով կայացվող որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն, ուստի քաղաքացիական դատավարության այս փուլում դատական պաշտպանության իրավունքի իրագործման և արդարադատության մատչելիության հավասար հնարավորության ապահովումն ունի հիմնարար նշանակություն:

2015թ. իրականացված սահմանադրական փոփոխությունների համատեքստում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում 2018թ. փետրվարի 9-ին ընդունվեց ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքը: Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրվեց, որ Վճռաբեկ դատարանը ոչ միայն ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն, այլ նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Վերջինս իր արտացոլումը գտավ նաև ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում և Քաղ. դատ. օր-ում:

Նոր օրենսգիրքը զգալի չափով վերացրեց քաղաքացիական դատավարության անհստակությունները, կարգավորման բացերը, թերությունները և այլն, սակայն դրանում ևս առկա են որոշակի թերություններ ու բացթողումներ, այդ թվում՝ վճռաբեկ վարույթի փուլում, որոնք հեղինակի առջև պահանջ են թելադրում վերանայել առկա իրավակարգավորումները, առաջարկել նոր մոտեցումներ և լուծումներ նշված հարաբերությունների լիարժեք կարգավորման համար:

Վերը շարադրվածով և մի շարք այլ հանգամանքներով էլ հիմնավորվում է կատարված հետազոտության արդիականությունը և հրատապությունը:

Ատենախոսության շրջանակներում հեղինակն իր առջև նպատակ է դրել՝ բացահայտել վճռաբեկ վարույթի տեսական և գործնական խնդիրները, կատարել վճռաբեկ վարույթի փուլում արդարադատության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրների համալիր ուսումնասիրություն, գնահատել դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավական կարգավորման արդյունավետությունը, բացահայտել ու հստակեցնել գործող օրենսդրության ու դատական պրակտիկայի թերությունները, առաջարկներ մշակել վճռաբեկ

վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու համար:

Հեղինակն օգտագործել է հսկայածավալ գրականություն, այդ թվում՝ դատական պրակտիկայի նյութեր և վիճակագրական տվյալներ, իր տեսական հիմնավորումները զուգորդել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ վճռաբեկ վարույթին վերաբերող բազմաթիվ դատական ակտերի մեջ նշված դիրքորոշումներով, որոնց մեջ քիչ չեն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներից բերվող հիմնավորումները, ինչն էլ ավելի է բարձրացնում կատարված աշխատանքի գիտական և գործնական մակարդակը:

Աշխատանքն ունի գիտական աշխատության կառուցվածք: Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու մշակվածության աստիճանը, պաշտպանության են ներկայացվում օրենսդրական կատարելագործման մի շարք առաջարկներ: Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է վճռաբեկ վարույթի ծագմանը և զարգացմանը գենեզիսին : Երկրորդ գլխում վերլուծված են վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման հարցերը, երրորդ գլխում՝ վճռաբեկ դատարանում գործերի քննության առանձնահատկությունները, իսկ չորրորդ գլխում քննարկվել է վճռաբեկ վարույթի նպատակները և խնդիրներն ըստ ժամանակակից իրավամտածողության մրցակցային դատավարության : Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է աշխատանքի հիմնական արդյունքները: Ատենախոսությանը կցված է նաև երկու հավելված, որոնք վկայում են, որ նոր օրենսգրքում ամրագրված երեք նորմերի կապակցությամբ հեղինակն ունի իր ներդրումը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսի կողմից փորձ է արվել համալիր վերլուծության ենթարկել վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործերի քննության դատավարական առանձնահատկությունները՝ վճռաբեկ փուլում արդարադատության մատչելիության տեսանկյունից և մշակել ու ներկայացնել սույն ոլորտում կամ դրա հետ կապված այլ ոլորտներում առկա խնդիրների տեսական և գործնական լուծումները:

Մինչհեղափոխական դատավարական մտքի տեսական մշակումների, խորհրդային և ժամանակակից դատավարական դրույթների մեկնաբանման հիման վրա կատարվել է համալիր ուսումնասիրություն քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի վերանայման խնդրի վերաբերյալ՝ վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրության կատարելագործման տեսանկյունից, հիմնավորվել են քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ վարույթի իրավական ընթացակարգը կարգավորող նորմերը կատարելագործելու առաջարկները, հաշվի առնելով դատական պաշտպանության իրավունքի միջազգային իրավական պահանջները:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշակի դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսն առաջարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածում դատական ակտերի պարտադիր բեկանման հիմքերը լրացնել, եթե՝

Դատարանի վճռում շարադրված եզրահանգումները չեն համապատասխանում գործի՝ դատական նիստում պարզված հանգամանքներին:

Համաձայն ՔԴՕ 66-րդ հոդվածի՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա իր ներքին համոզմամբ: Որպես կանոն, դատարանը վերը նշվածը որոշում է ոչ թե դատական նիստում, այլ վճիռ կայացնելիս: Մեր կարծիքով հեղինակի կողմից արված առաջարկը հանգեցնելու է բողոքով կաշկանդված չլինելու պայմաններում վճռաբեկ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների լրիվ ծավալով կրկնակի քննության, որը դասական իմաստով նման է լրիվ վերաքննության տարրերին:

2. Ատենախոսության 2-րդ գլխի 1-ին՝ ենթագլխում քննարկվում է դատական պաշտպանության իրավունքի իրագործման հետ կապված հիմնահարցերը, որի արդյունքում առաջարկվում է ՔԴՕ 394-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր հիմքով՝ **«Առերևույթ առկա է, որ գործին մասնակցող անձինք օբյեկտիվ պատճառներով զրկված են եղել անհրաժեշտ ապացույցները վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից»,** օրինակ՝ վճիռը բողոքարկվելուց հետո դատախազության կողմից նոր նյութեր ձեռք բերելու դեպքում:

Այս առաջարկի հետ կապված կարծում ենք, որ հեղինակի կողմից պետք է բերվեր այլ օրինակներ ևս, որպեսզի առաջարկն էլ ավելի հիմնավորված լիներ:

3. Հեղինակը պաշտպանության ներկայացված դրույթների 5-րդ կետում առաջարկում է ՔԴՕ 396-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը լրացնել **«բացառությամբ այն դեպքերի, երբ նույն գործով հաջորդ վճռաբեկ բողոք բերողը առաջադրում է նոր հիմնավոր փաստարկներ»** նախադասությամբ: ՔԴՕ-ի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: Այս համատեքստում հեղինակը բավարար չափով չի պարզաբանել, թե ինչպե՞ս է հնարավոր օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ դատական սխալի հիմքով նոր փաստարկներով բողոք բերել:

4. Ատենախոսը պաշտպանության դրվող դրույթների 7.1-րդ կետում առաջարկում է ՔԴՕ 402-րդ հոդվածում 1.1 կետով կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. **«Հարգելի հիմքերի կամ կողմերի համապատասխան միջնորդության առկայության դեպքում վճռաբեկ դատարանը պարտավոր է հետաձգել գործի քննությունը»:**

Առաջարկը ձևակերպելիս ատենախոսը պարտավորեցնում է Վճռաբեկ դատարանին վերը նշված հիմքերի առկայության դեպքում հետաձգել գործի քննությունը: Հեղինակը, հավանաբար առաջարկն անելիս ղեկավարվել է այս հարցի վերաբերյալ դատավարական իրավունքի տեսության մեջ գիտնականների ձևակերպումներով: Կարծում ենք, այս առաջարկը ձևակերպելիս ատենախոսը «պարտավոր» տերմինի փոխարեն կարող էր օգտագործել «կարող է» տերմինը, այսպես, օրինակ՝ կարող է հետաձգել գործի քննությունը:

5. Հեղինակն առաջարկում է Քրեական դատավարության օրենսգրքի 360.1-րդ հոդվածի նմանությամբ նոր հոդվածով լրացում կատարել ՔԴՕ-ում հետևյալ կերպ.

«Օրինականության խախտման դեպքեր հայտնաբերելիս վճռաբեկ դատարանը կայացնում է լրացուցիչ որոշում և այն ուղարկում է համապատասխան կազմակերպություններին ու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են մեկ ամսվա ընթացքում հարթել օրինականության խախտման իրավական հետևանքները»:

Կարծում ենք, այս առաջարկը կծանրաբեռնի Վճռաբեկ դատարանի գործունեությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, ի տարբերություն քրեական դատավարության, քաղաքացիական դատավարությունում գործերը բազմաթիվ են: Հեղինակը նաև չի անդրադարձել այն հարցին, թե ինչպե՞ս պետք է Վճռաբեկ դատարանը ապահովի իր որոշման կատարումը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքի վրա, կրում են մասնավոր բնույթ, պայմանավորված են աշխատանքն էլ ավելի լիարժեք տեսնելու ցանկությամբ:

Ա. Նազարեթյանի «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսությունը համարվում է ավարտուն գիտական հետազոտություն, քանի որ դրանում ճիշտ են ընտրվել և լուսաբանվել թեմայի բովանդակությունը կազմող հիմնահարցերը: Այն պարունակում է գիտական նորույթ և կարող է օգտակար լինել ՀՀ օրենսդրության հետագա կատարելագործման, իրավաբանական բուհերում վճռաբեկ վարույթի դասավանդման, ինչպես նաև իրավակիրառ գործընթացներում:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում արտացոլված արդյունքները: Կատարված աշխատանքն աչքի է ընկնում իր տրամաբանական կառուցվածքով, դյուրընթեռնելի ոճով և գրագետ շարադրանքով, ինչի արդյունքում այն կարող է օգտակար լինել նաև քննարկվող խնդիրներով հետաքրքրվողների համար:

Ատենախոսության բովանդակությունը լիովին համապատասխանում է ընտրված ԺԲ.00.04 մասնագիտությանը, իսկ հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածները և սեղմագիրը արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արթուր Սրապի Նազարեթյանի «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին: Գտնում ենք, որ ատենախոսության հեղինակն արժանի է «ԺԲ.00.04- Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի
քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի
պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների
դոկտոր Ս.Շ. Ծաղիկյան

Պրոֆեսոր Ս. Ծաղիկյանի ստորագրությունը
իսկությունը հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար
Բ.գ.թ. Ի.Ս. Բալաբաբովա

29.06.2020